

նասէր մարդիկ են, սիրտ չունին, իրենց բանուորներուն ստակէն կտրելով շահ կ'ընեն, և մանաւանդ թէ դատարկապորտ, զեղխ, անառակ ու ամեն պակառութիւն ունեցող մարդիկ են: Ծնդհակառակն աղքատք՝ ըստ իրենց՝ համեստ, մեծահոգի, անշահասէր, աշխատասէր են ու ամենայն առաքինութիւն ունին:

Ես այս բաներուս հակառակը չեմ ըսեր. միտքս դրած չեմ թէ հարուստներն ամենքն ալ մարդասէր, մեծահոգի, հաւատարիմ անձինք են ու ամեն կատարելութիւն ունեցող, և թէ դորձաւորք առ հասարակ ծոյլ են, ցոփշուայլ ու ամենայն մասամբ ախտաւոր. այս ըսելը արտաքոյ կարգի անիրաւութիւն կ'ըլլար: Կան աղէկ հարուստներ ալ գէշեր ալ. նոյնպէս աղէկ կամ գէշ աղքատներ. իրենք զիրենք միայն մտածող տէրեր, և այնպիսի դործաւորներ ալ որ ամենեին զիրենք բանեցընողներուն շահը չեն մտածեր: Բայց աս է որ ասոնք ալ՝ անոնք ալ մարդիկ են, և կատարեալ մարդ ամենեին չիկայ, եղէր է հարուստ, եղեր է աղքատ: Հարուստք և աղքատք, տեարք և դործաւորք պարտական են ուրեմն մէկմէկու պակառութեանցը զիջանիլ ու ներողամիտ ըլլալ: Սակայն դործաւորաց ձեռքն է հետզհետէ աւելի անկախ ըլլալ իրենց տէրերէն:

— Ի՞նչպէս կ'ըլլայ այս բանս :

— Եւելի կրթութեամբ ու ճարտարութեամբ ու նախատեսութեամբ: Երբ դործաւորը աւուրչէքի շատ պէտք չունի՝ ստիպուած չըլլար տիրոջը տուածովը գոհ ըլլալու. բնականապէս իր ոռնիկը կ'աւելնայ, ինչուան այնչափ որ դործատէրը վնաս կ'ընէ զանիկայ դործածելովը, վասն զի կանոն չիկայ այս կէտէն անդին անցնելու:

Միանգամայն մեծ քայլ մ'ալ կ'ընէք առ բարեկեցութիւն՝ եթէ առ հարստութիւն ալ չըլլայ՝ զոր հարք միայն իրենց որդուցն համար կրնան փափաքիլ: Ան ատեն՝ հաւատացէք ինծի, շատ գոհ կ'ըլլաք. հարուստներէն ալ աւելի գոհ, վասն զի գոհութիւնը կը կայանայ

ոչ այնչափ հարստութեան վրայ՝ քան որչափ զայն ստանալու հաճոյից վրայ: Ամեն մէկ քայլ որ այս նպատակաւ կ'ընենք՝ քան զստացումն աւելի վառվըռուն վայելից պատճառ է: Առաջին անգամ մէկդի դրուած ստակը աւելի հաճոյք կը պատճառէ՝ քան զգիզեալ գումարներն յետոյ: Ամենայն վաճառականք քեզի պիտի ըսեն եթէ իրենց առաջին շահը ամեն շահերէ աւելի հաճութիւն պատճառած է իրենց: Առաջին կտոր մը երկիրը կամ առաջին տնակը՝ զոր կարող կ'ըլլան գնելու՝ աւելի հաճոյք կը պատճառէ, քան թէ մեծ կալուած մը կամ մեծ տուն մը յետոյ գընեալ: Հարցուցէք մասնաւորապէս Ոնորիոսին, Սոժոնին և Տիւրուրին:

— Եւ ոչ ոք մէկը մեզմէ հակառակը կրնայ զուրցել, ըստ այս վերջինս համարձակածայն կերպով մը:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԲ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԽԱՆԻՑԱՍՆԵՐՈՐԴ

Թոքոց շարժմունքը

(Տես Երես 336)

Եւ 'ի վերայ այսր ամենայնի, այդ ամեն վայրկեանի պաշտպանը, այդ կենացդ հաւատարիմ պահապանը, քուծառադ է: Դու որ անոր վրայ հոգ ունենաս, ան ալ քու հրամանացդ մտիկ կ'ընէ: Կրնաս զինքը արագ արագ վագցընել, ծանր ծանր վազցընել, կամացդ ուղածին պէս, նաև բոլորովին դազրեցընել, թէ որ ախորժդ մէյմը բոնէ. սակայն ոչ թէ երկայն ժամանակ: Հին ժամանակի ժառանգութիւնը կատարելուն մէջ: Պղտի բաներու մէջ քեզի կը զիջանի. սակայն մի փոր-

ձեր ծանր պարագայի մէջ անոր բռնաւ, դատութիւն մը լնելու : Տեղ մը կարդացեր եմ, որ յանդուզն անզգամին մէկը՝ բանտի մը մէջ կապած ըլլալով, շունչը բռնելով ինքզինքը սպաննեց : Ատոր երբեք հաւատք չեմ տուած : Մեր այս առագաստը մէկու մը թոյլ շտար ապստամբութիւնը մինչև հոն հասցընելու :

Սակայն դեռ բանին ծայրը չհասանք, և չես գիտեր որչափ իրաւացի է իմ քեզի ըրած բաղդատութիւնս :

Իր տիրոջը բաւական է որ դժբաղդութիւն մը հանդիպի, կոկիծ մը, երբեմն խսկ պարզ գծկամակութիւն մը, բարեսիրտ ծառայն մէկէն անոր հետ կը վըշտանայ, և անոր ալ հաւասար, կամ նաև անկէ ալ աւելի : Երբեմն տէրը մը խիթարուած կ'ըլլայ, մինչդեռ ծառայն դեռ ևս իր տրտմութեանը մէջ կը շրունակէ :

Հազար առագամստը, ըսես պիտոր ինծի :

Առագաստը ճշդիւ նոյն բանը կ'ընէ, պղտիկ դու . քուկդ մասնաւորապէս քու վշտացդ անանկ մասնակից կ'ըլլայ, որ իրաւցնէ միշտ խելացի բան չէ : Անցած օրն որ մայրդ զքեզ հետը գեղ տանիլ չէր ուզեր, անանկ վշտացաւ քեզի համար՝ մինչ տագնապով սկսաւ ցնցուիլ, և դու այնչափ հեկեկացիր ու հեկեկացիր, որ հարկ եղաւ ըսել քեզի . « Եկուր չար աղջիկ » : Երջանիկ բոլորովին, մայրդ կը համբուրէիր, մինչ ան դեռ ևս հանդարտած չէր, անանկ որ քու պղտի կուրծքդ անոր վերջին ցնցմունքներովը դեռ շատ անգամ ելաւ ինջաւ :

Հեծկլտանքը, կը տեսնես, պարզաբար ցնցմունք մըն է, առագաստին մեծ ոստոստում մը : Անոր համար է որ կուրծքը այնչափ վեր վեր կը ցատքեցընէ :

Ուրախութեաննկատմամբ նոյն բանն է : Տիրոջը ուրախութիւնը ծառային պար բռնել կու տայ, և նաև զառագաստը կը զուարթացընէ : Անոր պղտի ոստոստիւնները այն ատեն՝ 'ի մեզ ծիծաղ ըստածնիս առաջ կը բերեն, որ քեզի շատ աղէկ ծանօթ բան մըն է : Զեռքդ կը ծոցդ

վրայ դիր, առջին անգամ որ ծիծաղիս, և կը փափաքիմ շուտ ըլլայ, կը տեսնես ինչպէս կ'ոստոստէ, և այդ առագաստին պատճառաւ է՝ որ զքեզ զուարթ տեսնելուն ուրախութենէն վեր վեր կը ցատքէ :

Դիտէ որ ասոնց և ոչ մէկը բռնական է : Ինքն իրեն կը մեկնի, այն բարի մանշը, առանց ինքն իրեն հարցում մ'ընելու թէ արդեօք բան մը պիտոր իմանամս եւ յիրտի, ցարդ բան մը չէիր գիտեր :

Ի՞նչ կ'ըսես հիմա առագաստին համար, սիրելի դու : Գեղեցիկ անուն մը չէ : Չէիր սպասեր ամենակին քու թոքոցդ ներքեր անանկ աղէկ ծառայ մը գտնելու, որ անանկ կերպով սիրէ ըզքեզ, և անանկ նման ըլլայ ըստ ամենայնի մարդկանց միջէն լաւագունին որ մեզի ծանօթ է : Դեռ ծայրը չհասանք, և 'ի վախճան քեզի նմանութեան նոր կէտ մը կը պահէի որ մեծ զարմանք պիտոր պատճառէ քեզի :

Ծեր ծառան կշամբող ու դեգ է երբեմն : Եթէ տանը մէջ բան մը իր ուզածին պէս չքալեր, զուրցելու ակնածութիւն մը չըներ, և երբեմն ալ իր այս զուրցելու կերպը քիչ մը կոշտ է : Որչափ և մէկը անհամբերութիւն զգալով զինքը լուեցընելուզէ, անիկայ ամենակին մը տիկ չըներ . այդ բանը իրեն արտօնութիւն մըն է : Սակայն բաւական է որ իր տիրոջը անակնկալ զէսք մը հանդիպի, կամ սաստիկ զգածեալ տեսնայ զինքը, մէկէն իր բոլոր կիրքը կ'իշնայ : Լովիկ մնջիկ իր գործին ետևէն կ'իշնայ, հազար անգամ աւելի լաւագոյն կերպով իր տիրոջը զգածմունքէն հնազանդութեան գալով, քան թէ բոլոր անոր անհամբերութենէն :

Կ'ուզես գիտնալ թէ ինչ կ'ուզեմ հետեցընել : Է՞՞ն, սիրուն տղաս, հեծկլտանքին պատմութիւնն է քեզի զուրցածս, հեծկլտանքին պատմութիւնը, ոչ աւելի և ոչ պակաս :

Պէտք է նախ ըսել քեզի որ առագաստը իր ներքեր եղած դրացւոյն հետ, որ է ստամնքսը, սերտ յարաբերութեանց մէջ է : Խորագանչիւր անդա-

մուն որ կրծոց մէջ վեր կ'ելլէ, ստա-
մքսն ալ անոր ետևէն կ'ելլէ, և ոչ միայն
ստամքսը՝ այլ նաև անոր ընկերներն՝
աղիք։ Բոլոր այն պաշտօնեալք որ մար-
սողութեան սահմանեալ են՝ անոր հետ
մէկտեղ կանոնաւորապէս կը ճանա-
պարհորդեն, եթէ իջնալու և եթէ ելլե-
լու։ Զեռքդ փորուդ վրայ դիր և ուժով
մը շնչէ. առագաստին բոլոր շարժմանց
ընդդիմահարութիւնը կը զգաս։

Արդ, երբ որովայնին մէջ բանը ձա-
խորդ երթայ, երբ պաշտօնէից շատ գործ
տրուի կամ անանկ գործ մը որ անոնց
ախործելի չէ, և կամ դարձեալ երբ ի-
րենց գործին ժամանակը անհանգիստ
ըլլուին, կ'ըլլայ որ մերթ ընդ մերթ ա-
ռագաստը իր որովայնի ընկերներուն
կողմնակից կ'ելլէ։ Այն ատեն կիրք կ'ել-
լէ, և կրցածին չափ իր տէրը կը ցնցէ։
Պէտք է որ գու ճանչնաս այդ ցնցմունք-
ները, որ երբ կ'երկարաձգին շատ կը
յոդնեցընեն։ Առագաստը այն ատեն բո-
լորովին կիրք ելած է։ Որչափ ալ իրեն
աղաշեն կամ իրեն դէմ խստանան, ան
իր ճամբան կը շարունակէ առանց մտիկ
ընելու, ամեն բան իր առջևէն ասդիս
անդին մղելով, և զինքը մէկէն հան-
դարտեցընելու մէկ հատիկ զօրաւոր
ճամբան գիտես։ Այդ միջոցը՝ պղտիկու-
թեան ժամանակ զիս շատ անգամ զար-
մացուցած է։ Յանկարծական վախ մը,
բարեկամի մը ձեռքէն պատճառած յան-
կարծական ցնցմունք մը, որ գաղտնի
կերպով ետևդ սահեր պահուըտեր է,
ահա բաւական է։ Կրած ցնցմունքէդ
զինաթափ՝ այդ ըմբոստ դնդերը քեզի
կըներէ, ու մէկէն կ'առողջանաս։

Որովհետև խօսքս այնչափ երկնցու-
ցի այդ երկու տեսակ անձանց գնացից
մէջ եղած իրաւցընէ հրաշալի նմանու-
թեանը վրայ, զոր ոչ ոք իմ ճանչցած-
ներէս, մտածեր է երբեք մէջերնին բաղ-
դատելու, պէտք է այս անդամ, սիրելի
տղաս, քեզի բոլոր այս նմանութեանցս
բանալին տամ, որ այնչափ դեգ կ'ե-
րմին ՚ի սկզբան, և սակայն իրապէս ա-
նանկ զարմանալի են, որոնք ինչպէս թէ
ինքնիրեննուն գրչիս ծայրը կը հասնին,

մինչդեռ ես քեզի մեկնութիւններ տա-
լու ձեռնարկս յառաջ կը տանիմ։ Շատ
մարդիկ, որ իրենք իրենց չուզենան պի-
տի նոյն բանը, ըսեն պիտի, թէ պղտի
աղջկան մը համար այդշափը շատ է։
սակայն ես կարծեմ որ ինչպէս աչք մը
առանց դժուարութեան լեռ մը կը տես-
նայ՝ նոյնպէս կը տեսնայ նաև ճանձ մը,
և թէ մեծ մտածութիւններն ըմբռնելլ՝
պղտիկ մտածութիւններէն աւելի դը-
ժուարին չեն։ Կարճատեպքն են և ոչ
թէ տղալք որ հեռուանց տեսնալ չեն
կընար։

Ո՞վ ստեղծեց երկինքն ու երկիրս։
Աստուած ստեղծեց, կ'ըսէ քեզի քու
քրիստոնէականդ։ Մի և նոյն Աստուած,
անանկ չէ. մենք ուրիշ երկրորդ մը
չենք ճանչնար։ Եթէ մի և նոյն Աս-
տուած է որ ըրեր է ամեն բան, ընդ-
հանրական գործաւորին ձեռքը ամեն
գին պէտք է որ գտնուի, և իր ձեռաւ-
կերտին վերէն ՚ի վար, մի և նոյն մտա-
ծութիւնն է որ հաղարումէկ զանազան
կերպարանօք պէտք է յայտնուի։ Ոչ
թէ միայն իւրաքանչիւր մարդ, առան-
ձին առանձին Աստուծոյ ձեռագործ է,
ողջոյն մարդկային ազգը նաև միահա-
մուռ առնուած՝ Աստուծոյ ձեռագործ
է, և այն օրէնքները որոնցմով մարդկա-
յին ընկերութիւնը, այն մարդկային
ազգին մեծ մարմինը, կը ջանայ ինք-
զինքը կանոնաւորելու որ ապրի, ան-
տարակուսաբար մի և նոյն են այն օրի-
նաց հետ՝ որոնցմով իւրաքանչիւրիս
մարմինը գործանաւորուեր շինուեր է։
Այնուհետև ուրեմն զարմանալի բան մը
չէ եթէ մարդկային մարմնոյն կենաց իւ-
րաքանչիւր մասին մէջ, մեր չորս գին,
մարդկային ընկերութեանը մէջ, անոր
համապատասխանող մաս մը կը գըտ-
նենք, կամ գոնէ անոր մերձեցող։ Զար-
մանալին այն կ'ըլլար, եթէ մարդկու-
թիւնը մարդէն տարբեր եղած ըլլար,
և թէ մարդկային ընկերութիւնը կանո-
նաւոր կենաց համար, իր իւրաքանչիւր
անդամներէն տարբեր պայմաններ ու-
նենար։ Ուստի և ես, մինչդեռ այս բա-
նիս վրայ խօսք կ'ընեմ, յօժարակամ

Խորհուրդ կու տայի անոնց որ քաղաքավարչութիւնը իրենց զբաղանք կ'ընեն, այսինքն ընկերութեան կեանքը, որ իրենց ընկերական մարմնոյն քննութիւնները մարդկային մարմնէն սկսին: Անկէ շատ աւելի բան կը սորվէին քան թէ լրագիրներէն:

Սակայն այս քեզի ամենեին չվերաբերիր: Առ այժմ մէկ բան մը միայն նշանակէ. այս ինքն մի և նոյն Աստուծոյ ձեռքն ամեն տեղէ անցեր է, և թէ ոչ մեծ յանդղնութիւն մըն է և ոչ մեծ արդիւնք՝ անոր ձեռագործին այլ և այլ մասանց մէջ բաղդատութեան կերպեր գտնալ: Այս բաղդատութիւնները պարզ մտքի խաղ մը չեն, այլ իրապէս գործին հիմանը մէջ կը գտնուին:

Քիչ մը խոնարհինք այդ բարձրութիւններէն ու գանք մերթոքոց: Շատոնցուընէ 'ի վեր է որ քեզի ատոնց վրայ կը խօսիմ առանց զուրցելու թէ ինչպէս շինուած են:

Շատ կ'ուղէի քեզի մէկ մը ցուցընել. սակայն քու գայեակդ կընայ քեզի ցուցընել երբ ուզես: Կատուին տուած կակուղ միսը, թոքի կտոր մըն է: Մերձեցուր մատիդ ծայրը ու դպիր. կակուղ բան մը կը զգաս որ մատին տակը տեղիք կու տայ ու յետոյ նորէն սպնդի մը պէս կը տնկուի: Եւ իրաւցընէ, թոքը սպնդի նման, անհամար պզտի խորշերէ ձևացած է, որոնց առաձգական կող մունքները կընան ըստ կամն մէկմէկու մօտենալ ու մէկմէկէ հեռանալ: Ատոնք պղտի սենեակներու կը նմանին, որոնց իւրաքանչիւրին մէջ օդը և արիւնը մէկ մէկ կողմէն վազելով կը մտնան, մէկ զմէկ բարեելու մէկմէկու ձեռքը թօթուելու, և յետոյ անմիջապէս ինչպէս եկան՝ արագաբար փախչելու: Կատուին տրուած թոքը ուրեմն, եթէ եղան մը ըլլայ, խողի կամ ոչխարի, կընաս վստահութեամբ դիտել. քու թոքդ ալ ճըշդիւ մի և նոյն կերպով շինուած է: Թէ որ կարենայիր կըծոցդ մէջ նայիլ, ուրիշ տարբեր բան մը չէիր տեսներ:

Ահա ուրեմն ինչպիսի է թոքին գոյացականը: Իսկ անոր ձեր, երեակայէ

երկու մեծ ծրար երկընցած, ներսի դիէն տափկած, կրծոց մէջ աջ ու ձախ դին կախուած, և մէջերնին սիրտը պարունակած, որ երկուքին մէջտեղը կախուած է: Իւրագանչիւր ծրարին վարի ծայրը սրտէն աւելի վար կ'իջնայ, և այն մէկմէկէ բաժնող միջոցին մէջն է որ առագաստին կորութիւնը իր երթեսեկ շարժմունքը կը կատարէ:

Քեզի ըսեր եմ որ օդը հագագին միջն թոքերը կը հասնի: Հագագը, որուն վրայ երկայն պիտոր խօսինք երբ քեզի ուրիշ հետաքրքրական բան մը մեկնեմ, որ պզտի աղջկանց շատ գոհացուցիչ հետաքրքրութիւն մըն է, ինչպէս է ձայնը, այդ հագագը հինգ աճառէ բաղկացած խողովակ մըն է, (գիտես հիմա աճառն ինչ է,) որոնց պինդ հիւսուածքը միշտ բաց կը բռնէ զայն: Այդ հինգ աճառներէ ետքը ուրիշներ կու գան, և այնպէս կը շարունակէ միշտ խողովակը. բայց այն ատեն խաչափող անունը կ'առնու:

Խոչափողը կրծոց մէջ մտնելով երկու ճիւղ կը բաժնուի՝ որոնք շնչափողք կ'ըսուին, և որոնց մէկը աջակողմեան թոքը կ'երթայ, միւսը ձախակողմեան թոքը: Շնչափողից ախտ ըսուածը անշուշտ երբեմն երբեմն կը լսես: Այդ ախտը շնչափողից բորբոքումն մըն է, որ թոքոց ամենամօտ են: Պէտք է այն ատեն աղէկ զգուշութիւն ընել, և ճշդիւ կատարել բժշկին յանձնարարութիւնները, վասն զի քայլ մըն ալ անդին՝ բորբոքումը շնչափողներէն թոքոց կը հաղորդուի, որոնց հետ խաղալ խոհեմութիւն չէ:

Շնչափողը թոքերը հասնելով՝ ճիւղեր կը բաժնուին, և այս ետքիններս ալ դարձեալ ուրիշ մանրագոյն ճիւղերու կը ստորաբաժանին, ծառի մը ճիւղերուն նման, և վերջապէս բոլորը անզգալի մանր փողերակներով կը վերջանան. որոնց իւրաքանչիւրը այն մէյմէկ սենեակներուն մէջ կը բացուին, որոնց վրայ քեզի ուրիշ անգամ խօսած եմ: Անոնց միջէն է որ օդը թոքերը կը հասնի: Սրտէն ելած երակային արիւնն ալ

մէկ հատիկ մեծ խողովակի միջէն , որ
բռքային շնչերակ կ'ըսուի , հոն կը հաս-
նի , աջակողմեան փորոքէն ելլելով : Մէ-
ջերնիս զուրցելով , մինչդեռ չկայ գի-
տուն մը ներկայ որ կարենայ նեղա-
նալ , շատ գէշ ընտրուած անուն մըն է
այդ , որովհետև երակային արիւն է որ
այդ ենթազրեալ շնչերակին մէջ կը վա-
զէ : Բայց այդ անկէ առաջ կու գայ , որ
բժիշկ պարոնները որոշեր են շնչերակը
կոչելու բոլոր այն խողովակները՝ որ սըր-
տէն կ'ելլեն , և երակը անոնք որ դէպ'ի
հոն կը դառնան , ինչ ալ ըլլայ այն ա-
րեան բնութիւնը որ մէջերնին կը բո-
վանդակեն : Ատոր մէջ փոփոխութիւն մը
ընել չենք կրնար , որովհետև բոլոր այդ
բաները իրենց կը վերաբերին . բայց այն
ատեն շնչերակային ու երակային արիւն-
ներուն վրայ խօսելու աշխատանքը չէր
աժեր : Լաւագոյն կ'ըլլար պարզապէս
ըսել , կարմիր արիւն ու սե արիւն :

Ինչ ալ ըլլայ , երակային արիւնը ա-
ջակողմեան փորոքէն թոքային շնչերա-
կով կու դայ : Այս ետքինս ալ շնչա-
փողից նման՝ հազարումէկ մանր ու
նուրբ խողովակներ կը բաժնուի , որոնց
ծայրերը ըսած մանր սենեակներուն
կողմունքներուն վրայ կու դան կը սո-
զոսկին :

Այն ատենն է որ օդուն և արեան
մէջ՝ այն խորհրդաւոր առևտուրը կը
հանդիպի , որուն անոնը այսչափ ատե-
նէ՝ ի վեր քեզի սպասել կու տամ , և
որուն միջոցաւ սե արիւնը կարմիր կը
փոխուի . կամ թէ լաւագոյն ըսելով ,
երակայինէ շնչերակային կը փոխուի :
Քեզի առևտուր ըսի . և իրաւցընէ իրա-
կան անունը այդ է , որովհետև արեան
այդ այլակերպութիւնը փոխանակու-
թեան մը միջոցաւ կը կատարուի : Օդը
արեան բան մը կու տայ , և արիւնն ալ
փոխադարձաբար օդուն տալով տալով ,
վաճառանոցի մը մէջ եղածին նման է :

Քու թոյլտուութքդ , սիրելի օրիորդ ,
այս տեղս կը դադարինք այսօր : Հոս տե-
ղը ածխավաճառանոց է , ուստի և քիչ
մը մութ կ'ընէ :

Կը շարանակաի :

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ՃԱՐԱԿԱՑԻ ԱՓՐԻԿԵ

Ով որ աչքը աշխարհագրական տախ-
տակի մը վրայ կը դարձընէ , և կը տես-
նէ Ափրիկէն կեցած ընդ մէջ ովկիանո-
սաց , և ընդ մէջ երից աշխարհաց Ա-
սիոյ , Եւրոպայ ու Ամերիկոյ , կը նկատէ
նաև այն երկիրը իրեւ ընդ մէջ անոր և
մեր գնտոյն ուրիշ երկիրներուն անցքե-
և յարաբերութեան կեղրոնական աշ-
խարհ մը : Այսու հանդերձ , 'ի բաց ա-
ռեալ այս երկրիս քանի մը ծովափնեայ
կողմերն , մէկալ մասերը հին ժամա-
նակներէ՝ ի վեր միշտ վայրենագոյն բար-
բարոսութեան վնասները կրած են .
Ժողովուրդը պզտի ցեղերու բաժնուած՝
միշտ իրարու հետ պատերազմով կ'ա-
պրին , մարդկանց որսորդութեան ու
վաճառի ետևէ են , և որ սոսկալին է ,
այս անարդ գործողութեանս մասնակից
կը գտնուին նաև քանի մը Եւրոպացիք ,
կամ Եւրոպայէն եկած Ամերիկացիք ,
մանաւանդ Սպանիացիք . հոն են դլխա-
ւոր մժերանոցներն , որոնք մասնաւո-
րապէս վաճառանոցներու գերի կը պա-
տրաստեն , և Պրազիլն ու Քուապա կղզին
կ'ապականեն :

Միայն հիւսիսային և հարաւային
կողմերը կըցած են հաստատուն բնա-
կութիւն ունեցող ժողովրդոց կոյան
ըլլալ : Ոչ միայն Եգիպտոս՝ որ մեր ցե-
ղին քաղաքականութեն խանձարուղքն
եղած է , այլ և ֆիւնիկեցիք զօրաւոր
թագաւորութիւն մը կանգնեցին հիւ-
սիսային դին , (կարքեղոն ,) թէպէտ
քիչ տեւեց . և արաբացի ազգերն ին-
չուան Ատլանտեան ովկիանոս ցրուած
էին : Հարաւային կողմը՝ անկլու-սաքսոն
ցեղէն Եւրոպացիք , բուն երկրին մէջ
շատ մը տէրութիւններ հաստատեցին ,
որոնցմէ մէկ քանին ինչուան Ափրիկոյ
լայնածաւալ երկրին ներաերը տարա-
ծուած են : Բարե-թուսոյ Գլխոյն անգ-
ղիական գաղթականութիւնը այն հա-
րաւային ծովափանոց վրայ քաղաքակա-
նութեան բարերար ազգեցութիւնը կը